ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
2003Թ.
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ,ք.Կապան
Շահումյան 20/32, 3301:
Հեռ. (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ»
հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019Թ.
№ 21 (511)
www.syuniacyerkir.am

Եվ փխրության է նման այս աշնան բերած խնդությունն իսկ...

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

17 հոկտեմբերի 2019թ., Կապան քաղաքով հոսող Ողջի գետը

Արթուր Գրիգորյան. «Զանգեզուրի կոմբինատի վերաբերյալ կառավարությունը պետք է քաղաքական որոշում ընդունի, այլ լուծում չկա, իրավական որոշումն աներկբայորեն ենթադրում է կոմբինատի գործունեության դադարեցում»

⇲2

Հունան Պողոսյանը պատասխանում է «Սյունյաց երկրի» հարցերին

2018 թ. հոկտեմբերի 16-ին Սյունիքի մարզպետ նշանակվեց գեներալ-լեյտենանտ, Հայաստանի Հանրապետության ոստիկանապետի՝ ոչ վաղ անցյալի առաջին տեղակալ Հունան Պողոսյանը:
Սյունիքի մարզպետի անցած մեկ տարվա գործունեությունն ամփոփելու, նաեւ սյունիքյան որոշ հիմնախնդիրների հանդեպ նրա դիրքորոշումն ու ծրագրերը ճշտելու նպատակով հարցազրույցի հրավիրեցինք Հունան Պողոսյանին:

-Աարոն Պողոսյան, ուրախ ենք Ձեզ հետ հերթական անգամ զրույց անցկացնելու հնարավորության համար:

Սյունիքի թիվ 1 պետական պաշտոնյայի հետ զրույցը, ամեն ինչից զատ, հնարավորություն է՝ անդրադարձ կատարելու մարզի բնակչությանն առավել մտահոգող հարցերին, դրանց լուծման ուղիներին:

Այնպես որ շնորհակալություն զրույցի հրավերն ընդունելու համար:

– Ես էլ եմ շնորհակալ հրավերի եւ թերթի միջոցով սյունեցիներին հուզող հարցերին անդրադառնալու հնարավորություն ընձեռելու համար:

– Դուք Սյունիքի մարզպետ նշանակվեցիք 2018 թ. ամենաբուռն շրջանում՝ հետհեղափոխական կամ իշխանափոխությանը հաջորդած օրերին:

Դա, հիրավի, մեծ սպասումների ժամանակաշրջան էր:

Անցել է մեկ տարի, իսկ հեղափոխությունից՝ մեկուկես տարի:

Ձեր խոսքը՝ ի՞նչ տվեց թավշյա հեղափոխությունը կամ իշխանափոխությունը Սյունիքին:

– Հեղափոխությունը Սյունիքին, իսկ առհասարակ, նաեւ ողջ Հայաստանին ու նրա քաղաքացիներին տվեց ազատություն, հնարավորություն եւ ժամանակ՝ մտածելու, թե ինչպես է պետք ապրել ու արարել, կառուցել ու ստեղծագործել:

Բայց, ինչպես արդեն առիթներ ունեցել եմ նշելու, հեղափոխություն առաջին հերթին պետք է կատարել մեր մտածելակերպում ու

էջ 3

Մեկ տարի առաջ գեներալ-լեյտենանտ Հունան Պողոսյանը ստանձնեց Սյունիքի մարզպետի պաշտոնը

Սյունիքի մարզում նշանակվել է նոր ոստիկանապետ

Հոկտեմբերի 10-ին գնդապետ, Գորիսի նախկին ոստիկանապետ Գեւորգ Ազիզյանը ՀՀ ոստիկանապետի պաշտոնակատար Արման Սարգսյանի հրամանով նշանակվել է Սյունիքի մարզային վարչության պետ:

■

Սյունիքի մարզում նշանակվել է նոր դատախազ

ՀՀ գլխավոր դատախազի հոկտեմբերի 11-ի հրամանով Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների դատախազի տեղակալ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Պետրոս Մարտիրոսյանը փոխադրվել եւ նշանակվել է Սյունիքի մարզի դատախազ:

ՀՀ դատախազության
հանրային կապերի բաժին

Աճանան համայնքի բնակիչները պայքարում են իրենց իրավունքների վերականգնման համար

Բնապահպան, լրագրող Թեհմինե Ենոքյանը ֆեյսբուքյան իր էջում գրել է. «Սյունիքի Աճանան համայնքի բնակիչները պայքարում են իրենց խախտված իրավունքների վերականգնման համար, եթե հաջողեցին ամրագրել իրենց հասցված վնասի պատճառահետեւանքային կապն իրավաբանորեն, ապա մենք կունենանք նախադեպ, լուրջ նախադեպ:

ԶՊՄԿ-ի դեմ դուրս եկած՝ ամեն ինչ կորցրած գյուղացիները, ովքեր 200 ստորագրություն են հավաքել, պահանջում են փոխհատուցել իրենց հասցված վնասը:

ԶՊՄԿ-ն ընդլայնում է Արծվանիկի պոչամբարի տարածքը՝ քանդելով գյուղացիների վարելահողերը: Գյուղացիները պահանջել են բոլոր փաստաթղթերը, որտեղ հանրային գերակա շահ է ճանաչված, կամ վարձակալությամբ է տրված»:

■

Գորայքի նորընտիր համայնքապետ Աշոտ Աղաջանյանը եւ նորընտիր ավագանին պետք է համագործակցեն. ուրիշ ճանապարհ չկա, եթե, իհարկե, նպատակը համայնքային խնդիրների լուծումն է

Սյունիքի մարզի Գորայք խոշորացված համայնքը նոր համայնքապետ ունի: Դա արձանագրվեց 2019 թ. հունիսի 30-ի համայնքապետի ընտրությունների արդյունքների հիման վրա:
Դեպի համայնքապետի աթոռ տանող ճանապարհը դյուրին չէր Աշոտ Աղաջանյանի համար: 2019 թ. համայնքից մի խումբ ցուցարարներ փակեցին Սիսիան-Երեւան ճանապարհը. նրանք պահանջում էին գործող համայնքապետի հրաժարականը:

Աշոտ Աղաջանյան, ծնվել է 1985 թ. Գորայք համայնքում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել եւ ավարտել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտը՝ ստացել ինժեների որակավորում: 2006-2008 թթ. ծառայել է Երեւանի հատուկ նշանակության գնդում: Ոչ մի կուսակցության անդամ չէ եւ ոչ էլ հարում է որեւէ կուսակցության: Ոչ մի աշխատանքից չի խորշել. աշխատել է վարորդ, մեխանիզատոր եւ այլն, 2016 թ. խոշորացված համայնք Գորայքի ավագանու անդամ էր:

– Եթե ժողովրդի մեծ մասը պահանջում էր համայնքապետի հրաժարականը, ապա, ես, որպես համայնքի ավագանու անդամ, պարտավոր էի լինել մեծամասնության կողքին, – ասում է Աշոտ Աղաջանյանը:

Պարբերաբար կրկնվող ցույցերը, համայնքապետի հրաժարականի պահանջումը հասցրին նրան, որ Գորայք համայնքում հունիսի 9-ին նշանակվեց համայնքապետի ընտրություն:

Իր թեկնածությունն էր դրել նաեւ Աշոտ Աղաջանյանը:

Ընտրության արդյունքներով հաղթող ճանաչվեց Աշոտ Աղաջանյանը: Սակայն մյուս թեկնածուն ամենեւին միտք չուներ հաշտվել ընտրության արդյունքների հետ: Ուստի եւ դատարանում վիճարկեց ընտրության արդյունքները: Հունիսի 30-ին կայացավ վերաքվեարկություն: Ընտրողների քվեների մեծ մասը կրկին ստացավ Աշոտ Աղաջանյանը:

Ինչպես շատ տեղերում, այս համայնքում էլ հետընտրական շրջանին բնորոշ բարոյահոգեբանական մթնոլորտը ճաքեր տվեց:

– Իմ առաջին գործը եղավ համայնքում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ստեղծումը, մարդկանց վստահության արդարացումը:

Աշոտ Աղաջանյանն իր առջեւ խնդիր դրեց հասնել նրան, որ համայնքի բոլոր բնակիչների համար համայնքի շահը դառնա բացարձակ արժեք: Իսկ դա նշանակում է համայնքի զարգացման համար նոր տեմպ ապահովել, մարդկանց մոտ նոր մտածելակերպի ձեւավորման շնորհիվ հասնել փոփոխությունների:

– Ես աշխատանք առաջարկեցի համայնքապետարանի նախկին բոլոր աշխատողներին: Նրանց մի մասն ընդունեց իմ առաջարկը, մի մասը՝ ոչ: Ես չեմ նեղվում, որ իմ կողմից նրանց պարզած ձեռքը մնաց օդում, ես հասկանում եմ նրանց. քաղաքական դիրքորոշման հարց է: Ամեն մարդ իրավունք ունի գործելու իր դիրքորոշմանը համապատասխան: Ես ընդունում եւ հարգում եմ նրանց դիրքորոշումը:

Երիտասարդ համայնքապետի համար երեք ամիսն էլ բավական էր համայնքի խնդիրները խորը եւ բազմակողմանիորեն ուսումնասիրելու համար:

– Այո, արդեն լրիվ տիրապետում եմ խնդիրների բովանդակությանը, դրանց լուծելն է դժվար, – ասում է համայնքապետը:

Եվ ավելացնում է՝ խնդիրներին հանձնվող չէ, խնդիրները ժամանակի ընթացքում մեկը մյուսի հետեւից լուծելու է, ուղղակի հիմա փնտրտուքի մեջ է. ուզում է այնպիսի ռազմավարություն մշակել, որ խնդիրների լուծմամբ ավելի շոշափելի արդյունքներ արձանագրվեն, որ համայնքի յուրաքանչյուր բնակիչ սեփական մաշկի վրա զգա դրական այն փոփոխությունները, որոնք առկա խնդիրների լուծման արդյունք կլինեն:

– Դրա համար էլ Գորայք խոշորացված համայնքի զարգացման հնգամյա (2020-24 թթ.) ծրագիրը կազմելիս հաշվի ենք առել ամեն մի մի դետալ, ամեն մի մանրուք, այսօր աննշան թվացող մի դետալն անգամ վաղը կարող է համայնքի զարգացման գործին մի նոր արագություն հաղորդել, – ասում է համայնքապետը:

– Մեզ համար առաջնահերթ խնդիր է եւ այն ներառել ենք հնգամյա ծրագրում՝ հողաչափությունը: Դրա իրական լուծումը դրական ազդեցություն կունենա համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Օրինակ, Սյունիքի մարզի արոտավայրերի 30 տոկոսը գտնվում է մեր համայնքում՝ շուրջ 46 հազար հեկտար, դրանք ալպիական մարգագետիններ են: Արոտավայրերից 21 հազար հեկտարը հեռագնա է: Սրանք խոսուն թվեր են, եւ այս թվերը համայնքի զարգացման վրա իրենց հետքն արագորեն կթողնեն՝ լավ իմաստով: Եվ, որպեսզի, կոպիտ ասած, բարձր գներով վարձակալության տանք մեր արոտավայրերը, եւ դրանց պահանջարկն ավելի մեծանա, համայնքի արոտավայրերն ապահովել ենք ջրով: Եվ հիմա արոտավայրերը վարձակալել ցանկացող անասնատերերին հարկ չկա ծանոթ-բարեկամի միջոցով ջրովի արոտավայրերի տեղն իմանալ ու դրա համար պայմանագիր կապել:

Մեր համայնքի զարգացման հիմնական ուղղությունը գյուղատնտեսությունն է, որով զբաղվում է բնակչության 80 տոկոսը: Սակայն

էջ 8

Արթուր Գրիգորյան. «Զանգեզուրի կոմբինատի վերաբերյալ կառավարությունը պետք է քաղաքական որոշում ընդունի, այլ լուծում չկա, իրավական որոշումն աներկբայորեն ենթադրում է կոմբինատի գործունեության դադարեցում»

էջ 1

...Նկարում Զանգեզուրի կոմբինատի թափոններն են, որոնք լցվում են Արծվանիկի պոչամբար, եւ որ վթարի հետեւանքով լցվել են Ողջի գետ: Աղտոտման մասշտաբը պատկերացնելու համար ասեմ, որ նկարում պատկերված բոլոր խողովակների հոսքը միասին վերցված՝ փաստորեն նոյնպիսի ճնշմամբ ժամեր շարունակ լցվել է գետը:

Խնդրի իրավական բնութագիրը հետեւյալն է՝

1. Տեղի ունեցածը քրեական հանցագործություն է, բայց կարծում եմ ոչ էկոցիդ, քանի որ էկոցիդը քրեական օրենսգրքում ձեւակերպված է որպես ուղղակի դիտավորությամբ իրականացվող արարք: Քննությունը պետք է դա պարզի:

2. Տեսչությունը պետք է Զանգեզուրի կոմբինատում իրականացնի մասնակի ստուգում, եւ ոչ թե միայն ջրի նմուշառում: Գործող օրենսդրության համաձայն՝ բացառապես ստուգման արդյունքում կարող է իրականացվել շրջակա միջավայրին պատճառվող վնասի հաշվարկ եւ տրվել հանձնարարականներ: Բացի այդ, տեսչության լաբորատորիան դեռ չունի տեխնիկական հագեցվածության այն մակարդակը, որ կարողանա լիարժեք հետազոտություն իրականացնել: Դրա համար Քաջարանում ստուգում իրականացնելիս ես առողջապահության նախարարին խնդրել էի, որ իրենց լաբորատորիայում իրականացվեն ջրերի եւ տիղմի լաբորատոր հետազոտությունները:

3. Բնապահպանական վերահսկողության գործիքակազմը շատ բազմազան է եւ չի ենթադրում միայն մի քանի գրոշի չափով վնասի հաշվարկ ու տուգանք, ինչպես փորձում են ներկայացնել բնապահպանության ոլորտի այսօրվա պատասխանատուները: Տեսչության ամենաազդեցիկ գործիքն ընկերության տնօրենին տրվող հանձնարարականն է, որը տվյալ դեպքում պետք է լինի՝ «առնվազն Գերմանիայում ընդունելի չափանիշներին համապատասխան» Ողջի գետը ընկերության լցրած թափոններից մաքրելը: Համեմատության համար ասեմ, որ Շվեդիայում հանքարդյունաբերական թափոններով աղտոտված մի փոքր գետակ մաքրելու համար ծախսվել է շուրջ 15 միլիոն եվրո: Թող սրանք էլ այդքան փող ծախսեն ու մաքրեն, տեսնեմ հաջորդ անգամ էդպիսի ղալլաթ կանեն: Սա է այն հիմնական գործիքը, որ ընկերություններին կստիպի իրենց ենթակառուցվածքները կարգի բերել, ֆիլտրեր տեղադրել ու պետությանը մարդատեղ դնել: Հենց այսպիսի հանձնարարականներ պետք է տրվեր Զանգեզուրի կոմբինատին իմ օրոք տեսչության իրականացված ստուգման արդյունքում:

Հ.Գ. Զանգեզուրի կոմբինատի վերաբերյալ կառավարությունը պետք է քաղաքական որոշում ընդունի, այլ լուծում չկա, իրավական որոշումն աներկբայորեն ենթադրում է կոմբինատի գործունեության դադարեցում: Հիշում եք, բնապահպանական եւ ընդերքի տեսչությունը Քաջարանում մոտ 4.5 ամիս տեւած մանրակրկիտ ստուգում իրականացրեց: Ստուգման արդյունքում իրավական որոշում ընդունելու դեպքում այս ընկերության ընդերքօգտագործման իրավունքը վաղուց արդեն պետք է դադարեցված լիներ՝ ապօրինի ընդերքօգտագործման եւ այլ բազմաթիվ իրավախախտումների հիմքերով, պետք է հարուցված լիներ բազմաթիվ քրեական գործեր, որոնք չհարուցվեցին: Գործող կառավարության ամենաբարձրաստիճան պաշտոնյաներն իրենց գործողություններով փաստացիորեն ստանձնել են Զանգեզուրի կոմբինատի ստուգման արդյունքներն ամփոփելու պատասխանատվությունը: Նրանք էլ պատասխանատվություն են կրում այսօրվա վթարի եւ 4.5 ամսվա աշխատանքը փոշիացնելու համար:

Բնապահպանության եւ ընդերքի պետական տեսչության նախկին ղեկավար Արթուր Գրիգորյանի ֆեյսբուքյան էջից
17 հոկտեմբերի 2019թ.

Արթուր Կոստանդյան. «ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղում շեշտը դրվում է գիտելիքի եւ կրթության որակի վրա»

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (ՀԱՊՀ) Կապանի մասնաճյուղում ավարտվել է հեռակա ուսուցման ընդունելության գործընթացը:

ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղում սովորելու համար հայտ էր ներկայացրել 103 դիմորդ:

Նրանցից 35-ը հաղթահարեց ընդունելության քննությունների անհրաժեշտ շեմը:

Ըստ ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի տնօրեն, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Արթուր Կոստանդյանի՝ դիմորդների եւ ընդունվածների հարաբերակցությունը վկայում է, որ մասնաճյուղում շեշտը դրվում է գիտելիքի եւ կրթության որակի վրա:

Արդյունքում ձեւավորվել է չորս մասնագիտական խումբ՝ Լեռնային գործ եւ օգտակար հանածոներ, Մետալուրգիա, Տնտեսագիտություն եւ Օգտակար հանածոների հարստացում:

Դիմորդների համար մասնաճյուղում կազմակերպվել էին նախապատրաստական դասընթացներ մաթեմատիկա եւ ֆիզիկա առարկաներից:

«Սյունյաց երկիր»

Մեկ տարի առաջ գեներալ-լեյտենանտ Հունան Պողոսյանը ստանձնեց Սյունիքի մարզպետի պաշտոնը

Հունան Պողոսյանը պատասխանում է «Սյունյաց երկրի» հարցերին

Սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 5-ն անցկացվող ռազմավարական զորավարժությունների ժամանակ

էջ 1 կենցաղում, անհրաժեշտ է համատեղել բոլոր կարող ուժերը, համախմբվել երկրի իշխանությունների շուրջ եւ շարժվել առաջ, միմիայն առաջ:

– **Փորձենք թվերի լեզվով ամփոփել անցած մեկ տարին, խնդրեմ:**

Ի՞նչ խնդիրներ հաջողվեց լուծել Սյունիքի մարզում:

– Այս հարցազրույցի ձեւաչափում ու սահմաններում հնարավոր չէ ամփոփել մեկ տարում արվածը, դրա համար առանձին հաշվետվություն կհրապարակենք, որտեղ տեսանելի կլինեն մանրամասները՝ նաեւ թվերի լեզվով:

Իսկ բնակչության հետ ամենօրյա աշխատանքից պարզ է մեկ բան՝ մարդու կյանքում կարեւոր է աշխատանքը եւ աշխատանքն է խնդիրների լուծման բանալին:

Եվ ամենօրյա շփումների, այցերի, հանդիպումների միջոցով հասկանում ու վեր ենք հանում մարզի հոգսերը, փորձում լուծումներ տալ:

– **Մարզպետի պաշտոնը, ուզենք-չուզենք, քաղաքական պաշտոն է պետական մեր համակարգում:**

Երբ հետադարձ հայացք ենք ձգում մինչեւ 1995 թվական, մինչեւ վարչատարածքային բարեփոխում եւ մարզպետական ինստիտուտի ձեւավորում, ակնհայտ է դառնում, որ Սյունիքի մարզպետներից յուրաքանչյուրը՝ ունեցած քաղաքական-սոցիալական հենարանի առումով, տարբեր վիճակում է գտնվել:

Ո՞վ է Ձեր քաղաքական-սոցիալական հենարանը Սյունիքում:

Այո՛, իշխող քաղաքական ուժն է Ձեզ վստահել Սյունիքի մարզպետի պաշտոնը, բայց կուսակցական չեք:

Սյունիքյան հայտնի ֆինանսական կենտրոններն էլ, թույլ տվեք ասել, ուրիշների ազդեցության տակ են:

Տեղական որեւէ կլան կամ խմբավորում չեք ներկայացնում...

– Կարծում եմ՝ թե՛ իմ եւ թե՛ մարզպետարանի ողջ ղեկավարության հենարանը, բոլոր առումներով, արարող, ստեղծող մարդն է, հայը, սյունեցին, ով հասկացել է այս փոփոխությունների դրական շարժընթացը, ունի առողջ մտածելակերպ, երկրի զարգացման իր տեսլականը եւ ցանկություն՝ մասնակցելու իր, մեր զավակների, բոլորիս ապագայի կերտմանը:

– **Ըստ մեզ (թվերը, փաստերը մի կողմ դրած)՝ անցած մեկ տարում մարզը դուրս բերվեց ինտրիգների, խարդավանքների աներեւակայելի լաբիրինթոսից, երբ մարդկանց հանում էին միմյանց դեմ, երբ մարզում հանրային լարվածություն էին հրահրում:**

Մեզ թույլ ենք տալիս արձանագրել, որ անցած մեկ տարվա սյունիքյան հաջողություններից մեկը հենց դա է:

Եվ ուզում ենք հուսալ, որ տարածքային քաղաքականության այդ գիծն այսուհետ առավել դոմինանտ է լինելու Ձեր գործելակերպում:

– Հավաստիացնում եմ, որ դոմինանտ եւ կենսունակ կլինի ու կշարունակվեն ոչ միայն այդ գիծը, այլեւ առկա խնդիրների լուծման շատ այլ գծեր, ձեւեր ու մեթոդներ...

– **Մի դիտարկում եւս, որ նույնպես շատ կարեւոր է, որի վերաբերյալ Ձեր մտածումներին նույնպես կուզենայինք ծանոթանալ:**

Մարզպետն ու մարզպետարանն այլեւս որեւէ թիմի, որեւէ կլանի, որեւէ խմբակի գործիքը չեն:

Մյուս կողմից՝ դա շատ պատասխանատու վիճակ է:

Ինչպե՞ս եք կառուցում հարաբերությունները մարդկանց հետ, ավելի ճիշտ՝ շարքային սյունեցիների հետ:

– Այո՛, այդպես է. ասեմ, որ այդ ամենին հասնելու կամ մարդկանց հետ հարաբերություններ կառուցելու հստակ դեղատոմսեր չկան, ի վերջո, յուրաքանչյուր անհատ կամ հանրային խումբ առանձին մոտեցում ու գործելաոճ է պահանջում, բայց հիմնական սկզբունքը սա է՝ մենք սիրում, հարգում ենք սյունեցիներին ու մեր աշխատանքում եւ առօրյայում անում ենք ամեն ինչ, որ իրենք էլ մեզ սիրեն ու հարգեն:

– **Իսկ ի՞նչ անհաջողություններ ունեցաք անցած մեկ տարում կամ ի՞նչ սպասելիքներ ունեիք, որ ինչ-ինչ պատճառներով (օբյեկտիվ կամ սուբյեկտիվ) իրականություն չդարձան:**

– Գիտե՞ք, առավելագույնը, հնարավորինս շատը, լավագույնն անելու, իրագործելու ցանկությունն այնքան մեծ է, որ եթե ինչ-որ բան չի ստացվել կամ ստացվում, նույնիսկ ոչ մեր մեղքով, ապա դա որպես անհաջողություն ենք դիտարկում: Իսկ կուտակված ու դեռեւս չլուծված խնդիրներն այնքա՛ն շատ են, որ ամեն ինչ անում ենք՝ օր առաջ դրանք լուծված տեսնելու համար:

– **Մարզպետի ինստիտուտի մասին ամենատարբեր (հաճախ ոչ դրական) տեսակետներ են շրջանառվում հանրության մեջ:**

Պատճառներից մեկն այն է, որ մարզպետարանների կազմավորումից հետո (1995-96 թթ.) չկարողացանք ընդունել տարածքային կառավարման մասին օրենք, այսինքն՝ խաղի կանոնները չհստակեցրինք:

Անշուշտ, ուրիշ պատճառներ էլ կային ու կան:

Ձեր կարծիքը տարածքային կառավարման այսօրվա մոդելի՝ մարզպետարանների մասին, արդյո՞ք կայացել են դրանք, արդյո՞ք խոչընդոտներ կան լիարժեք գործունեություն ապահովելու ճանապարհին:

– Հավանաբար իրենց գործունեության պատճառով են մարզպետներն ու մարզպետարաններն առիթ տվել տարբեր գնահատականների եւ տեսակետների:

Կարծում եմ՝ մարզպետարանների գոյությունն ու աշխատանքն արդարացված են ու անհրաժեշտ, եւ դրա համար էլ այս օրերին ԱԺ օրակարգում է «Տարածքային կառավարման մասին» օրենքի նախագիծը:

Ինչպես գիտեք, մարզերում պետական կառավարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում էին ՀՀ նախագահի 1997 թ ՆՀ-278-Ն հրամանագրով, որը, սակայն, ՀՀ նախագահի 2018 թ ապրիլի 9-ի ՆՀ-226-Ն հրամանագրով ուժը կորցրած էր ճանաչվել:

Վերոնշյալ նախագիծն արդեն խորհրդարանն առաջին ընթերցմամբ ընդունել է:

Համոզված եմ՝ օրենքի ընդունումից հետո շատ հարցերի պատասխաններ կտրվեն, կհստակեցվեն լծակները, լիազորությունները, հետեւաբար եւ պատասխանատվության շրջանակն ու մարզպետարանին ներկայացվող պահանջները:

– **Մարզպետարանների օպտիմալացումն օրակարգում է:**

Ի՞նչ է սպասվում Սյունիքի մարզպետարանին՝ կառուցվածքային առումով, աշխատակիցների կրճատումների առումով:

Կկարողանա՞ք տեր կանգնել պրոֆեսիոնալներին, իրենց գործի նվիրյալներին, որեւէ մեկի հովանավորությունը չվայելողներին, չէ՞ որ դա էլ ոչ դյուրին խնդիր է փոքր միջավայրում:

– Ինչպես պետական բոլոր կառույցներում, մարզպետարաններում էլ օպտիմալացում է սպասվում, դեռեւս հստակ չեն ապագա կառուցվածքն ու կրճատվող հաստիքների թիվը, եւ, իհարկե, ամեն ինչ պետք է առողջ տրամաբանության սահմաններում արվի, անշուշտ, պիտի տեր կանգնենք պրոֆեսիոնալներին ու նվիրյալներին եւ ճիշտ համադրենք փորձն ու երիտասարդությունը:

– **Դուք մեր հանրապետության իրավապահ համակարգի, մասնավորապես ոստիկանական ոլորտի փորձառու եւ երեւելի դեմքերից եք:**

Հետաքրքիր է, ինչպե՞ս եք գնահատում մարզի իրավապահների գործունեությունը:

Ի դեպ, մարզի ոստիկանությունում կադրային վերջին փոփոխությունները բավականին դրական են ընդունվել երկրամասում:

Հասկանում ենք՝ իրավապահ ոլորտի համակարգումն ուղղակիորեն Ձեր գործառույթների մեջ չի մտնում, բայց մի հարց, այնուամենայնիվ, հետաքրքրում է հազարավոր սյունեցիների. Սյունիքը կազատվի՞ իրավապահ համակարգի ոչ բարի համբավ ունեցող գործիչներից:

– Համաձայն չեմ Ձեր ընդհանրական բնորոշումներին ու ձեւակերպումներին, մեկ-երկու պաշտոնյաների հետ կապված ինչ-որ դեպքեր կարող են լինել, բայց մեծ հաշվով իրավապահ համակարգը բարեխղճորեն աշխատում է, եւ իրականացվող փոփոխություններն ակնհայտ են ու դրական:

– **Պարոն մարզպետ, փորձենք թվերի լեզվով տալ բոլորին հետաքրքրող մի հարցի պատասխանը՝ ի՞նչ հանքեր են գործում Սյունիքում, ի՞նչ է իրենից ներկայացնում Սյունիքն ընդերքօգտագործման տեսակետից:**

Ի՞նչ է տալիս ընդերքօգտագործման ներկայիս աննախադեպ մասշտաբը Սյունիքին, շարքային սյունեցուն:

– Մարզի մետաղական հանքավայրերից ներկայում շահագործվում են երեքը՝ «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի եւ «Չաարատ Կապան» ՓԲԸ-ի կողմից: Այդ ձեռնարկությունները ՀՀ խոշոր ձեռնարկություններից են եւ բազմաթիվ աշխատատեղեր են ապահովում շարքային սյունեցու համար:

> *Ինչպես պետական բոլոր կառույցներում, մարզպետարաններում էլ օպտիմալացում է սպասվում, դեռեւս հստակ չեն ապագա կառուցվածքն ու կրճատվող հաստիքների թիվը, եւ, իհարկե, ամեն ինչ պետք է առողջ տրամաբանության սահմաններում արվի, անշուշտ, պիտի տեր կանգնենք պրոֆեսիոնալներին ու նվիրյալներին եւ ճիշտ համադրենք փորձն ու երիտասարդությունը*

Սյունիքի ընդերքը հարուստ է բազմապիսի օգտակար հանածոներով, ու բոլորիս խնդիրն է՝ ընդերքօգտագործումն իրականացնել բացառապես օրենքի շրջանակներում:

– **Հանքարդյունաբերությանն առնչվող շատ հարցեր չէինք ցանկանա քննարկել սույն հարցազրույցում, քանզի դրանք դուրս են մարզպետի գործառույթների տիրույթից:**

Եվ, այդուհանդերձ, մի հարց չենք կարող շրջանցել. ի՞նչ է կատարվում Արծվանիկի պոչամբարում:

Կատարվե՞լ են արդյոք համապատասխան հանրային քննարկումներ, չէ՞ որ պոչամբարն օրեցօր ընդլայնվում է:

Կատարվե՞լ են արդյոք ՇՄԱԳ-ի վերանայման աշխատանքներ:

– Դուք ինքներդ նշեցիք, որ հարցը մարզպետի լիազորությունների շրջանակից դուրս է: Կարծում եմ՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը տիրապետում է իրավիճակին, եւ ՇՄԱԳ-ի վերանայման հարցերով պետք է նրանց մասնագետներին դիմել:

– **Սյունիքը լեռնային եւ սահմանամերձ գյուղերի հանրագումար է. դրանով է Սյունիքն անկրկնելի եւ հզոր:**

Ինչպե՞ս եք գնահատում վիճակը գյուղերում:

Գյուղեր կան, որ կանգնած են լինել-չլինելու ստույգ վտանգի առջեւ:

Կառավարությունում տեղյա՞կ են այդ գյուղերի ճգնաժամային վիճակի մասին, եւ ի՞նչ է արվում դրությունը շտկելու համար:

– Մարզի գյուղական բնակավայրերը եւ՛ մարզպետարանի, եւ՛ կառավարության մշտական ուշադրության տիրույթում են, ինչի ապացույցը մեր մշտական այցերն են, նաեւ վերջերս ՀՀ վարչապետի խորհրդական Ռոբերտ Ղուկասյանի կատարած շրջայցը մեր գյուղերում ու խնդիրներին տեղում ծանոթանալը:

Մշտապես կատարվում է խնդիրների «գույքագրում», ըստ առաջնահերթության ներկայացվում կառավարություն, ու ելքեր են փնտրվում դրանց լուծում տալու համար:

Օգտվելով առիթից՝ կցանկանայի գովեստի խոսքեր հղել մեր գյուղացիներին, որոնք չընկրկելով դժվարություններից, շարունակում են ապրել ու արարել հայրենիքում:

– **Կյանքը ցույց տվեց, որ համայնքների խոշորացումը լեռնային գյուղերի գոյապահպանության հարցում մեծ ռիսկեր է պարունակում:**

Սկզբից ասում էին՝ տեսնենք եւ հետո միայն ամփոփենք արդյունքները:

Հիմա ամեն ինչ տեսանելի է:

Կառավարությունում մտադիր չե՞ն վերլուծել, թե խոշորացումից հետո ինչ է տեղի ունեցել գյուղական ամեն

էջ 6

Սյունեցիները եւ հայ հին գրականությունը

ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Վանաձորի պետական համալսարան

Սկիզբը՝ N19-ում (20.09.19թ.)

8-րդ դարում հայտնի է քերական, շարականագիր եւ թարգմանիչ Մովսես Քերթողը (մոտ 680 - մոտ 750): Ստ. Օրբելյանի վկայությամբ՝ Մովսես եպիսկոպոս Քերթողը 722-729 թթ. եղել է Սյունիքի մետրոպոլիտ. «Տեր-Մովսեսը՝ յոթ տարի: Սա ամենայն զգուշությամբ դաստիարակում էր սուրբ Ստեփանոսին՝ իմաստասերին ու նահատակին»:[33] Կրթությունն ստացել է Շաղատի վարդապետարանում եւ դարձել տեղի անվանի ուսուցչապետերից մեկը՝ դասավանդելով Ստեփանոս Սյունեցուն եւ առանձնահատուկ վերաբերմունք ունենալով նրա հանդեպ. «Այս Ստեփանոսը, գնալով Սյունյաց երանելի եպիսկոպոս Մովսեսի մոտ, աշակերտում է նրան»:[34]

Մովսես Քերթողը հմուտ է քերականության, հռետորության, իմաստասիրության մեջ: Նրան են վերագրվում Փիլոն Եբրայեցու որոշ երկերի թարգմանությունները, «Յաղագս միոյ բնութեան Բանին մարմնացելոյ» դավանաբանական գրվածքը, Աստվածհայտնության ճրագալույցի, Ս. Ծննդյան, Տյառնընդառաջի եւ այլ շարականներ: Մովսես Քերթողի անունով մի աղոթք էլ պահպանվել է Մաշտոցյան Մատենադարանի թիվ 1720 ձեռագրում, որից էլ այն տպագրվել է «Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության» գրքում:[35]

Նիկողայոս Ադոնցը հույն քերական Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստի» հայ մեկնիչների մեջ հատուկ կարեւորում է Մովսես Քերթողի մեկնությունը:

Հայ հին գրականության շարականագիրների պայծառ սերնդի մեջ իրենց հոգու երգը երկինք առաքեցին նաեւ սյունեցիներ Ստեփանոս Սյունեցին եւ իր քույրը՝ Սահակդուխտ Սյունեցին: Հայ բանաստեղծ-շարականագիր, քերականության մեկնիչ, թարգմանիչ, եկեղեցական գործիչ Ստեփանոս Սյունեցին (մոտ 670-735) կրթվել է Դվինում, որի կաթողիկոսարանի ավագերեց Սահակի որդին է: Կրթությունը շարունակել է Գեղարքունիքի Մաքենյաց վանքում՝ Սողոմոն վանահորն աշակերտելով, այնուհետեւ Սյունյաց քերթողական դպրոցում՝ աշակերտելով Մովսես Քերթողին:

Մովսեսը մահից առաջ Սյունյաց դպրոցի հոգաբարձությունը հանձնում է Ստեփանոսին, իսկ Մովսեսի մահից հետո Սյունեցին մեկնում է կաթողիկոսի մոտ եւ Անանիա անունով մեկին իր փոխարեն կարգել տալով Սյունյաց դպրոցի ուսուցչապետ՝ մնում է Դվինում: Այստեղ էլ Սմբատ Բագրատունի իշխանի հետ վիճաբանում է կրոնական հարցերի շուրջ եւ հալածվելով նրա կողմից՝ հեռանում Կ. Պոլիս:

Կ. Պոլսում եղած ժամանակ, ինչպես վկայում են Կիրակոս Գանձակեցին եւ Ստ. Օրբելյանը, Սմբատ ասպետը, որ երկրնակ մարդ էր, գրում է կայսերը, թե Ստեփանոսը հերձվածող է: Կայսրը Ստեփանոսին կանչում է պալատ, նրան լսելուց հետո կայսեր բարկությունն անցնում է, եւ Ստեփանոսի խնդրանքով նա բացել է տալիս կայսերական մատենադարանը, ուր Սյունեցին գտնում է ոսկետառ մի մատյան ուղղափառ հավատի մասին:[36]

Հանդիպել է նաեւ Կ. Պոլսի Գերմանոս պատրիարքին, ում թուղթը թարգմանել եւ բերել է հայոց կաթողիկոս Հովհան Օձնեցուն: Վերջինիս հանձնարարությամբ եւ Մանազկերտի ժողովի պահանջով 726 թ. պատասխանել է նաեւ Գերմանոսի թղթին՝ տալով մերժողական պատասխան:

728 թ. կարգվել է Սյունյաց մետրոպոլիտ՝ թեմի առաջնորդ:

735 թ. հուլիսի 21-ին Մոզ ավանում, ծառի վրա քնած, սպանվել է մի կնոջ կողմից, ում անառակ վարքի պատճառով հանդիմանել էր: Թաղվել է Թանահատի վանքում: Ըստ ավանդության՝ մահից հետո 40 օր երկրաշարժ է եղել Եղեգյաց ձորում, ինչի պատճառով էլ այն անվանել են Վայոց ձոր:

Հայագիտության մեջ առանձնացվել է նաեւ 5-րդ դարի շարականագիր Ստեփանոս Սյունեցին, ում չպետք է նույնացնել 8-րդ դարի Ստեփանոսի հետ. այս կարծիքը չէր ընդունում Գ. Զարբհանալյանը[37], մինչդեռ Մ. Աբեղյանը նրան անվանում է երկրորդ Ստեփանոս Սյունեցի:[38] Վերջերս այս տարակարծությունը կրկին վերարծարծվեց. Ստեփանոս Սյունեցուն 5-րդ դարի շարականագիր համարեց Ն. Թահմիզյանը[39], հակառակ կարծիքն է պնդում Լ. Սարգսյանը:[40] Ստեփանոս Սյունեցի շարականագիր 5-րդ դարում ներկայացնում է նաեւ Հ. Բախչինյանը[41]:

Ստեփանոս Սյունեցու մասին վկայություններ ունեն Կիրակոս Գանձակեցին, Ստ. Օրբելյանը, Մխ. Այրիվանեցին:

Ստ. Օրբելյանն իր պատմության մի ամբողջ գլուխը (լա) նվիրել է Ստեփանոս Սյունեցուն՝ «բոլոր էակներից անհամեմատելիին, իմաստունին եւ սերովբեներից սպասարկված աստծու մարդուն՝ Ստեփանոս իմաստասերին եւ անհաղթ հռետորին՝ Սյունյաց մետրոպոլիտին»:[42]

Ստեփանոս Սյունեցին բազմաժանր ստեղծագործող է. գրել է շարականներ, թղթեր, թարգմանական գործեր, քերականական եւ կրոնական մեկնություններ, ճառեր:

Ստեփանոս Սյունեցին գրել է նաեւ Դիոնիսիոս Թրակացու «Արվեստ քերականության» մեկնությունը: Գրել է նաեւ աստվածաշնչյան բազմաթիվ մեկնություններ, որոնցից Ծննդոց եւ Հոբի մեկնությունները չեն պահպանվել, իսկ Ավետարանների, Դանիելի եւ մի շարք այլ մեկնություններ հասել են մեզ: Ստեփանոս Սյունեցին նաեւ հոգեւոր երգերի հեղինակ է: Ստ. Օրբելյանը գրում է. «Նրա նշանավոր գրվածքները ուրիշ մեկնիչների գործերի մեջ փայլում են պայծառ ջահի նման: Գրեց նաեւ բազմաթիվ ճառեր. ութ եղանակները բաժանեց, կարգեց, շարեց Հարության օրհնությունները, երգեց եւ քաղցրալուր կցուրդներ. հարմարեցրեց «Յինանց»-ի տաղաչափությունը յոթ եղանակներով՝ հույժ խորհրդավոր»:[43]

Օրհնութիւն, Հարցն (Գործք), Մեծացուցէ, Ողորմեա, Տէր երկնից, Մանկունք, Ճաշու, Համբարձի ութ ձայնեղանակների ստեղծողը համարվում է հենց Ստեփանոս Սյունեցին, իսկ մինչ այդ եկեղեցում ժամերգվել են կցուրդներ եւ մարգարեական օրհներգեր: Այսինքն՝ կանոն կոչվածը մինչ 8-րդ դարը չի եղել հոգեւոր երգի մեջ եւ հայ հոգեւոր երգարվեստում Ստեփանոս Սյունեցու նորամուծությունն է: «Մի անգամ որ կանոնը մտնում է մեր ժամերգության մեջ, բնականաբար պիտի աշխատեին հետզհետե հին կցուրդներից ու կացուրդներից զանազան տոների համար կանոնի պահանջած թվով երգերի շարքեր կազմել»:[44]

Հոգեւոր երգը սկզբնապես հանդես է եկել կցուրդ-սաղմոսների միջոցով, կազմվել է «Կցուրդարան» ժողովածուն, որը հետագայում՝ 8-րդ դարից հետո, անվանվել է «Շարակնոց»:

Մեծանուն Ստեփանոս Սյունեցու քույրն է 8-րդ դարի բանաստեղծ, երաժիշտ, երգահան Սահակդուխտ Սյունեցին, որի ծննդյան եւ մահվան թվականներն անհայտ են: Նրա մասին կենսագրական տեղեկությունները սակավ են: Հայ պատմիչներ Ստ. Օրբելյանը եւ Մխ. Այրիվանեցին, խոսելով Ստեփանոս Սյունեցու մասին, թողել են հպանցիկ վկայություն նրա քրոջ՝ Սահակդուխտ հայ առաջին բանաստեղծուհու մասին. «Սա մի քույր ուներ, որը մանկությունից ընդունել էր կույսի վարքը, առանձնացել էր Գառնու ձորի մի քարայրում եւ կյանքն անցկացնում էր անտանելի ճգնակեցությամբ. նրա անունը Սահակդուխտ էր: Նա շատ հմուտ էր երաժշտության արվեստին, որը եւ սովորեցնում էր շատերին՝ վարագույրի տակ նստած, նաեւ ստեղծեց բազմաթիվ քաղցրեղանակ կցուրդներ ու մեղեդիներ, որոնցից մեկը [նվիրված] սուրբ Մարիամին, որն իր անունով հորինեց»:[45]

Մ. Օրմանյանը գրում է, որ Սահակդուխտը «քաղցրանուագ տաղեր յօրինած եւ երգած է, եւ նոյնիսկ վարագոյրի ետեւէն ուրիշներուն ալ սորվեցուցած է»:[46]

Թաղվել է Գառնիի ձորում. «Նա մեռավ ու այնտեղ էլ թաղված է գերեզմանում, որից շատ բժշկություններ են լինում»:[47]

Սահակդուխտը հորինել է «բազմաթիվ քաղցրեղանակ կցուրդներ ու մեղեդիներ, որոնցից մեկը [նվիրված] սուրբ Մարիամին, որն իր անունով հորինեց»[48], ինչպես նաեւ «արար տաղս բազումս եւ մեղեդիս եւ կցուրդս Ծննդեան եւ Փոխմանն, յորոց մի է Սրբուհի Մարիամ»[49]: Մեկը՝ «Սրբուհի Մարիամ» սկսվածքով, հասել է մեզ. այն ակրոստիքոս է, որի տների սկզբնատառերը հոդում են Սահակդուխտ անունը: «Սրբուհի Մարիամ» օրհներգը, որ ժամանակին եղել է «Շարակնոց»-ի մեջ, իսկ հետագայում դարձել է պարականոն, դարերի կորստից փրկել եւ Անթիլիասի Մայր Աթոռի թիվ 1741 ձեռագրում, որն արտագրված է 1499թ. Աղթամարում, հայտնաբերել ու 1951թ. «Հասկ» ամսագրում հրատարակել է Նորայր Պողարյանը:[50] Ավելի վաղ այն հատվածաբար տպագրել էր Ղ. Ալիշանը:[51] Համեմատելով երկու երգերը՝ Հ. Բախչինյանը եզրակացնում է. «Պարզ երեւում է, որ «Սրբուհի Մարիամ» սկսվածքով երգերը միանգամայն տարբեր ստեղծագործություններ են եւ ոչ թե նույն երգի տարբերակներ: Ընդ որում, այս երգերը Սուրբ Ծննդյան (Աստվածահայտնության) կարգի համար գրված Մեծացուսցէներ են»:[52]

Թեեւ Մխ. Այրիվանեցին գրում է, թե Սահակդուխտը հորինել է բազում երգեր՝ համալրելով Ծննդյան եւ Վերափոխման կարգերը, սակայն մեզ այժմ հայտնի են միայն Սահակդուխտի՝ «Սրբուհի Մարիամ» սկսվածքով երկու երգերը, մեկն՝ ամբողջական, մյուսը՝ թերի (չհաշված «Զարմանալի է ինձ» շարականը, որը որոշ հայագետներ վերագրել են Սահակդուխտին, մինչդեռ այն Խոսրովիդուխտ Գողթնացունն է):

Սահակդուխտ բանաստեղծուհին առանձնակի երեւույթ է հայ հին գրականության մեջ. նա Խոսրովիդուխտ Գողթնացու հետ հաստատում է, որ հայ հին գրականությունը միայն տղամարդկանց մտքի ու գրչի արդյունքը չէ:

9-րդ դարի հոգեւոր գործիչ, հայոց կաթողիկոս Մաշտոց Եղվարդեցին (մոտ 830-898) ծնվել է Սյունյաց գավառի Սոթք գյուղում: Մաշտոց Եղվարդեցին ձեռնադրվել է քահանա Սյունյաց Դավիթ եպիսկոպոսի կողմից, ապրել անապատականի կենցաղով Արտավազդիկում՝ Ծաղկաձորի մոտ, ապա՝ Սեւանի մենաստաններում:

874 թ. Սյունյաց իշխան Գաբուռն Վասակի կնոջ՝ Մարիամ Բագրատունու օժանդակությամբ, ով իր վաղամեռիկ ամուսնու հիշատակին ուխտել էր կառուցել 30 եկեղեցիներ, Մաշտոց Եղվարդեցին կառուցել է Սեւանա կղզու Ս. Առաքելոց եւ Ս. Աստվածածին եկեղեցիները՝ հիմնելով միաբանություն եւ վարժարան, որի առաջնորդն է եղել 874-897 թթ.:

Երբ մահանում է Գեւորգ Բ Գառնեցի կաթողիկոսը, Սմբատ Ա արքան որոշում է կաթողիկոս դարձնել Սեւանի մենաստանի առաջնորդ Մաշտոց վարդապետին, ով մեծ հեղինակություն էր վայելում իր իմաստասիրությամբ, ճգնակեցությամբ: Մաշտոց Եղվարդեցին հայրապետ է եղել 7 ամիս: «Սա մի սուրբ ու առաքինի մարդ էր, լցված էր հանճարով ու իմաստությամբ, բնակվում էր Սեւանա կղզում մեծ ճգնակեցությամբ. քառասուն տարի հաց չկերավ ու ջուր չխմեց, մի շորով էր ու բոբիկ: Սա կարգավորեց այն գրքերը, որոնք իր անունով կոչվում են Մաշտոց: Հավաքելով միասնաբար կարգավորեց բոլոր աղոթքներն ու ընթերցվածները՝ կցելով իր կողմից գրված հավելված, որ իր մեջ պարունակում է քրիստոնեության հավատի կարգուկանոնը: Սա հասնելով պատվական ծերության՝ վախճանվեց փառքով ու պատվով»:[53]

Մաշտոց Եղվարդեցին մահացել է 898 թ. հունվարի վերջին. «Անակնկալ մահուանը ոչ մի բացատրութիւն չի տար Պատմաբանը, որ իր աշակերտն, ազգակիցն ու յաջորդն է միանգամայն: Տարիքն ալ չի յիշէր, որ յոյժ յառաջացած տարիքին վերագրենք արագահաս մահը»:[54] Թաղվել է Գառնիի տաճարի մոտ. «Նրա ոսկորների նշխարները հանգչում են Գառնիում՝ Խոսրովադուխտի հովանոցի մերձավորությամբ, որը կառուցվել էր Հայոց Տրդատ արքայի կողմից»:[55]

Մաշտոց Եղվարդեցուց մեզ է հասել երկու թուղթ: Նա դեռեւս Սեւանում ճգնելիս կազմել եւ խմբագրել է «Մաշտոց» ծիսարան ժողովածուն, որը սխալմամբ համարվել է Մեսրոպ Մաշտոցի կազմածը, սակայն Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ այն կազմել է Մաշտոց Եղվարդեցին:

Ամփոփենք. 5-9-րդ դարերում Սյունյաց աշխարհում ստեղծված է եղել գրական-մշակութային միջավայր թարգմանական գրականության, քերթողական արվեստի, ինքնուրույն գրականության ստեղծման համար. այդ գործում մեծ է եղել Սյունյաց քերթողական դպրոցի դերը, որը տվել է «քերթող» անվանված երեւելի աշակերտներ, որոնք եղել են հայ հին գրականության պատմությանն ընթացք տվող մշակութային գործիչներ: Քերթող են անվանվել քերականը, մեկնիչը, թարգմանիչը, բանաստեղծը, որոնք էլ հենց հիշատակված սյունեցի գործիչներ են:

Բանալի բառեր. Սյունյաց քերթողական դպրոց, հայ հին գրականություն, թարգմանական եւ ինքնուրույն գրականություն, մեկնություններ:

Ключевые слова: Сюникская школа стихотворчества, древнеармянская литература, переводческая и оригинальная литературы, комментарии.

key words: poetical school of Syunik, Ancient Armenian school, independent literature and literature in translation, interpretations.

Вано Егиазарян
д.филол.н., профессор
СЮНИКЦЫ И ДРЕВНЕАРМЯНСКАЯ ЛИТЕРАТУРА
Резюме

В 5-9 веках на Сюникской земле существовала особая литературно-культурная среда для создания переводной литературы, стихотворческого искусства и оригинальной словесности. В этом большую роль сыграла Сюникская школа стихотворчества, давшая выдающихся учеников, которые повлияли на процесс развития древнеармянской литературы.

Vano Yeghiazaryan
Doctor of Philology, Professor
The People of Syunik and Ancient Armenian Literature
SUMMARY

There was a favourable literary-cultural environment in the land of Syunik in the 5-9th centuries for the formation of poetical art, as well as independent literature, and the role of the Syunik poetical school in it was really great. The graduates of that school were quite distinguished and later became historico-cultural figures in ancient Armenian history.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Աբեղյան Մ., Երկեր, հ. Գ, Ե., 1968:
Ալիշան Ղ., Յուշիկք հայրենեաց Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1870:
Բախչինյան Հ., Շարականի գրապատմական ուղիմ, 5-14-րդ դարեր, Ե., 2012:
Գանձարան հայ հին բանաստեղծության, աշխ. Պ. Խաչատրյանի, Ե., 2000:
Եղիազարյան Վ., Հայ հին գրականության պատմություն, Ե., 2014:
Զարբհանալեան Գ., Հայկական հին դպրութեան պատմութիւն, Վենետիկ, 1886:
Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության, աշխ. Պ. Խաչատրյանի եւ Հ. Քյոսեյանի, էջմիա-

Կարեն Համբարձումյան ճանաչված սրտաբանի նոր առաքելությունը Սյունիքում

Հոկտեմբերի 5-ի շաբաթ օրն անսովոր եռուզեռ էր «Գորիսի բշժկական կենտրոն» ՓԲ ընկերությունում: Ներկա գտնվողներից յուրաքանչյուրը գրեթե նույն պատասխանն էր տալիս մեր հարցին, թե ինչ առիթով է այցելել հիվանդանոց: Կարեն Համբարձումյանի գլխավորությամբ բժշկական խումբ է ժամանել Գորիս, ուզում ենք օգտվել նրանց ծառայությունից...

Բժիշկ Կարեն Համբարձումյանի հանդեպ հետաքրքրությունը պատահական չէ: 2013 թ. հոկտեմբերից մինչեւ 2019 թ. հունիս Գորիսի հայ-ֆրանսիական սիրտանոթային բժշկական կենտրոնի բուժական մասի ղեկավարն էր: Այդ ընթացքում բժշկական կենտրոնում իրականացվել է երկու հազարից ավելի մարդու սրտի անոթների անգիոպլաստիկա, հինգ հազարից ավելի հիվանդի կոնսուլտացիա, ինչպես եւ կատարվել են էխոսրտագրություն ու սպասվող սիրտանոթային հիվանդությունների կանխարգելում: 2019 թ. հունիսի 10-ից Կարեն Համբարձումյանը Երեւանում համբավ ունեցող «Բեսթ-լայֆ» հայ-ճապոնական սիրտանոթային բժշկական կենտրոնի գլխավոր բժիշկն է:

Հաշվի առնելով մարդկանց հետաքրքրությունը, զրույցի հրավիրեցինք Կարեն Համբարձումյանին՝ եւ այցելության նպատակը ճշտելու, եւ Գորիսի հայ-ֆրանսիական սիրտանոթային բժշկական կենտրոնից հեռանալու պատճառները պարզելու, եւ ներկայիս գործունեության հետ կապված որոշ հարցերի պատասխանը ստանալու համար:

– **Պարոն Համբարձումյան, ողջունում ենք Ձեր այցը Գորիս:**

Տեսնում ենք՝ բավականին շատ հաճախորդներ են հավաքվել՝ Ձեր գլխավորած բժշկական խմբի ծառայությունից օգտվելու համար:

Դատելով այս եռուզեռից (եւ ոչ միայն), կարող ենք փաստել, որ Գորիսում Ձեզ սպասում էին, թեեւ չորս ամիս առաջ եք տեղափոխվել Երեւան:

Փորձենք համառոտակի ամփոփել Հայ-ֆրանսիական սիրտանոթային բժշկական կենտրոնում Ձեր վեցամյա գործունեության արդյունքները:

– Հազարավոր փրկված կյանքեր, մարդկանց երախտիքի խոսքեր, ուրախ աչքեր...

Այդ ամենը՝ Բարձրյալի օգնությամբ:

Եվ ինձ բավարարված ու երջանիկ եմ զգում, որ այդքան մարդկանց կյանք եմ փրկել, որ բազմաթիվ մարդկանց վերադարձրել եմ ակտիվ ու բնականոն կյանքի հուն:

Վեց տարվա ընթացքում, շնորհիվ մեր ծառայության, էականորեն բարելավվել է սիրտանոթային հիվանդությունների ճանաչողությունը, ախտորոշումների իմացությունը Սյունիքի մարզում:

– **Հենց դրա համար էլ մարդիկ ափսոսում են, որ Գորիսից տեղափոխվել եք:**

– Ոչ միայն բժշկության մեջ, այլեւ մեր կյանքի բոլոր ոլորտներում մարդը երբեւէ հասնում է մի հանգրվան, որից հետո մասնագիտական առաջընթացը նոր մոտեցում է պահանջում, նոր թիմային զարգացում, նոր խնդիրներ առաջադրում:

Գորիսի հայ-ֆրանսիական բժշկական կենտրոնում, կարելի է ասել, իմ առաքելությունն ավարտված համարեցի...

Թեեւ այս դեպքում խոսքը մասնագիտական առաջընթացի մասին է, բայց ինձ համար դժվար էր որոշում կայացնել՝ Երեւան տեղափոխվելու համար:

Անկեղծ լինեմ՝ ամիսներ են պահանջվել վերջնական որոշում ընդունելու համար:

Եվ երեք-չորս ամսվա ընթացքում, երբ արդեն Երեւանում եմ, ամեն օր, չնայած խիստ ծանրաբեռնվածությանս, մտածում եմ՝ ի՞նչ ֆորմատով կարող եմ օգտակար լինել Գորիսի բնակչությանը:

> *Ես հաստատուն մի համոզմունք ունեմ՝ ապրելու բանաձեւ, որով էլ առաջնորդվել եւ առաջնորդվում եմ կյանքում՝ վերեւ Աստված կա եւ Նա էլ կգնահատի յուրաքանչյուրիս արածը, ու Աստծո առաջ մի օր պատասխան կտա մեզանից յուրաքանչյուրը...*

Այսօրվա մեր այցելությունը նման մտածումների արդյունք է նաեւ:

– **Եվ, այդուհանդերձ, Գորիսից Ձեր տեղափոխվելու եւ առհասարակ գորիսյան Ձեր գործունեության մասին վերջին օրերին երբեմն ոչ հաճելի խոսակցությունների ենք հանդիպում սոցիալական ցանցերում:**

– Ցավալի է զրպարտություններ լսելը...

Բայց այդ ամենի հանդեպ, խոստովանեմ, անտարբեր եմ:

Այդ ամենին վերաբերվում եմ ոչ լրջորեն, քանզի փաստական հիմքերից զուրկ, շինծու խոսակցություններ են, որոնց նպատակն իմ պատիվը, արժանապատվությունը եւ բարի համբավն արատավորելն է:

Ես հաստատուն մի համոզմունք ունեմ՝ ապրելու բանաձեւ, որով էլ առաջնորդվել եւ առաջնորդվում եմ կյանքում՝ վերեւ Աստված կա եւ Նա էլ կգնահատի յուրաքանչյուրիս արածը, ու Աստծո առաջ մի օր պատասխան կտա մեզանից յուրաքանչյուրը...

Կարող եմ հստակ ասել՝ բոլոր տարիների ընթացքում եւ բոլոր պարագաներում աշխատել եմ հօգուտ հիվանդի...

Եվ նման նվիրումի, նման գործելակերպի շնորհիվ էր, որ Գորիսի՝ գրեթե չգործող, ճանաչում չունեցող հիվանդանոցը դարձավ Հայաստանի լավագույն կլինիկաներից մեկը:

– **Հասցրե՞լ եք բժշկական կենտրոնի կոլեկտիվին, գործընկերներին՝ բաժանվելուց առաջ, ողջերթի խոսքեր ու բարեմաղթանք հղել:**

– Հիմա եմ ասում եւ Ձեր միջոցով եմ հղում՝ մաղթում եմ նույն ջանասիրությամբ, նույն նվիրումով աշխատել ի շահ հիվանդի:

Ուզում եմ, որ բժշկի աստվածատուր առաքելությունն այսուհետ եւս նրանցից յուրաքանչյուրը շարունակի կատարել պատասխանատվությամբ:

– **Եվ, իհարկե, գորիսյան այսօրվա այցելության մասին՝ մի փոքր ավելի հանգամանալից:**

– Երեւանի «Բեսթ-լայֆ» հայ-ճապոնական սիրտանոթային բժշկական կենտրոնը, իր գլխավոր խնդիրներից զատ, նպատակ ունի նպաստ բերել մարզերում բժշկության զարգացմանը:

Միտումը հստակ է՝ պետք չէ, որ հիվանդն ամեն ստուգման համար հասնի Երեւան:

Այսօր Գորիսում ենք, հետագայում կլինենք նաեւ այլ մարզերում ու բնակավայրերում:

Մեր օգնությամբ Գորիսում ներդրվելու է սիրտանոթային հիվանդությունների համար շատ կարեւոր մի հետազոտություն՝ հոլտեր մոնիթորինգ կամ 24-ժամյա ԷՍԳ հսկողություն:

Գորիս ենք եկել փորձառու բժիշկների թիմով, աշխատելու ենք մեկ օր, կատարում ենք սրտային վիրաբույժի, ինվազիվ առիթմոլոգի, ինվազիվ սրտաբանի եւ սրտաբանի կոնսուլտացիաներ, գործիքային հետազոտություններ ԷՍԳ, Էխո ՍԳ, հոլտեր մոնիթորինգ եւ արյան անալիզներ:

Գորիսի բժշկական կենտրոնում, մեր այցից հետո, շարունակելու են մատուցել նշված ծառայությունները՝ բժշկուհի, սրտաբան Շողիկ Թունյանի գլխավորությամբ:

– **Իսկ ինչո՞ւ այդ ծառայությունները չեք իրականացնում Գորիսի հայ-ֆրանսիական սիրտանոթային բժշկական կենտրոնի հետ համատեղ, որ գուցե եւ առավել արդյունավետ լիներ:**

– «Բեսթ-լայֆ» հայ-ճապոնական սիրտանոթային բժշկական կենտրոնն այդ ծրագիրն իրականացնում է հանրապետության տարածաշրջանների պետական բժշկական կենտրոնների հետ:

Գորիսի բժշկական կենտրոնում մեր ծառայությունների համար կան համապատասխան եւ անհրաժեշտ պայմաններ՝ դրանք արդյունավետ իրականացնելու համար:

Եվ, ընդհանրապես, նպատակ ունենք մարզերում համագործակցել տեղացի բժշկական կադրերի հետ:

Մեր թիմն էլ ամսական մեկ-երկու անգամ կայցելի Գորիս, ինչի մասին մենք նախապես կիրազեկենք բնակչությանը:

– **Հարգելի բժիշկ, շնորհակալություն զրույցի համար, Ձեր ծրագրին՝ հաջողություն:**

Զրույցը՝ Սամվել Ալեքսանյանի

ծին, 2003:
Թահմիզյան Ն., Սյունեցի համանուն երկու երաժիշտներ եւ Հարության ավագ Օրհնությունները, Էջմիածին, 1973, Բ:
Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982:
Կորյուն, Վարք Մաշտոցի, Ե., 1981:
Հասկ, Անթիլիաս, 1951, դեկտեմբեր:
Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Ե., 1982:
Մեսրոպ Վայոցձորեցի, Սուրբ Գրիգոր Լուսավորչի տոհմի մասին եւ սուրբ Ներսես հայոց հայրապետի պատմությունը, արեւելահայերեն թարգմանությունը, առաջաբանը եւ ծանոթագրությունները՝ Վանո Եղիազարյանի, Վանաձոր, 2015:
Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, 1981:
Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Ե., 1969:
Յովսէփեան Գ., Մխիթար Այրիվանեցի, Երուսաղեմ, 1931:
Սարգսյան Լ., Կարծեցյալ Ստեփանոս Սյունեցի՝ շարականագիր V դարի, Լրաբեր հասարակական գիտությունների, 1993, թիվ 1:
Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմություն տիեզերական, Ե., 2000:
Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986:
Ուխտանէս եպիսկոպոս, Հայոց պատմութիւն, Ե., 2006:
Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Ա, էջմիածին, 2001:

Ծանոթագրություն

32. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 147:
33. Անդ, էջ 149:
34. Տես Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության, աշխ. Պ. Խաչատրյանի եւ Հ. Քյոսեյանի, էջ 242:
35. Տես Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982, էջ 63:
36. Տես Գ. Զարբհանալեան, Հայկական հին դպրութեան պատմութիւն, Վենետիկ, 1886, էջ 387:
37. Տես Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, Ե., 1968, էջ 537:
38. Տես Ն. Թահմիզյան, Սյունեցի համանուն երկու երաժիշտներ եւ Հարության ավագ Օրհնությունները, Էջմիածին, 1973, Բ, էջ 29-43:
39. Տես Լ. Սարգսյան, Կարծեցյալ Ստեփանոս Սյունեցի՝ շարականագիր V դարի, Լրաբեր հասարակական գիտությունների, 1993, թիվ 1, էջ 120-129)
40. Տես Հ. Բախչինյան, Շարականի գրապատմական ուղին, 5-14-րդ դարեր, Ե., 2012, էջ 81-84:
41. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմությունը, էջ 148:
42. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 152:
43. Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Գ, էջ 541:
44. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ152-153:
45. Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 1010:
46. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 153:
47. Անդ, էջ 152:
48. Գ. Յովսէփեան, Մխիթար Այրիվանեցի, Երուսաղեմ, 1931, էջ 18-19:
49. Տես Հասկ, Անթիլիաս, 1951, դեկտեմբեր, էջ 366:
50. Տես Ղ. Ալիշան, Յուշիկք հայրենեաց Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1870, էջ 129-200:
51. Հ. Բախչինյան, Շարականի գրապատմական ուղին, 5-14-րդ դարեր, Ե., 2012, էջ 133:
52. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, էջ 68:
53. Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 1182:
54. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմություն տիեզերական, Ե., 2000, էջ 210:

■

Մեկ տարի առաջ գեներալ-լեյտենանտ Հունան Պողոսյանը ստանձնեց Սյունիքի մարզպետի պաշտոնը

Հունան Պողոսյանը պատասխանում է «Սյունյաց երկրի» հարցերին

էջ 3

մի բնակավայրում:

– Չեմ կարծում, թե դա ռիսկային է, հենց մեր մարզի համայնքների օրինակով կարող եմ ասել, որ խոշորացումը ճիշտ էր: Հատկապես փոքր գյուղերն իրենց խեղճ բյուջեներով տարիներ ի վեր որեւէ հարց չէին կարողանում լուծել: Մինդեռ հիմա խոշոր համայնքները, այսպես ասած, իրենց հետեւից տանում են փոքրերին ու գյուղերում բազմաթիվ աշխատանքներ են արվել խոշորացված համայնքների բյուջեների հաշվին կամ էլ պետբյուջե-համայնք համաներդրումով՝ լուսավորություն, ճանապարհների բարեկարգում, ջրագծեր, աղբահանության կազմակերպում եւ այլն: Անելիքները շատ-շատ են, եւ ըստ առաջնահերթությունների շարժվում ենք:

– **Հանրապետության, ինչպես եւ մարզի տնտեսական առաջընթացի գլխավոր գրավականներից մեկը (եթե ոչ ամենագլխավորը) ներդրումների մակարդակն է:**

Վերջին մեկ տարում Սյունիքում կատարված ներդրումների պատկերը, խնդրեմ:

– 2018թ. մարզի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման, ինչպես նաեւ առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման նպատակով տարվա ընթացքում տեղական եւ միջազգային կառույցների, հիմնադրամների ու բարեգործական կազմակերպությունների միջոցով, ընդգրկելով մարզի բոլոր համայնքները, իրականացվել են շուրջ 49 մլրդ դրամի զարգացման, ներդրումային եւ վարկային ծրագրեր: 2019թ. ցուցանիշներն ավելին կլինեն: Բերեմ մեկ օրինակ. 2018թ. համայնքների տնտեսական եւ սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների ընդհանուր գումարը կազմել է 445.2 մլն դրամ, որից համայնքների ներդրումը՝ 227.8 մլն դրամ, իսկ 2019թ. համար պլանավորված է շուրջ 3.8 միլիարդ դրամ, որից համայնքների ներդրումը՝ շուրջ 1.5 միլիարդ դրամ է:

– **Մեր նախորդ հարցազրույցում (31 հունվարի 2018 թ.) Դուք ասացիք, որ 2018-ին մարզում ստեղծվել է 900 աշխատատեղ:**

Իսկ ի՞նչ կասեք հիմա՝ աշխատատեղերի ստեղծման, զբաղվածության խնդրի կարգավորման առումով:

Ոչ պակաս հետաքրքիր է մեկ այլ հարց՝ մարզից արտագնա աշխատանքի մեկնողների դինամիկան:

– Շատ հաճախ ունենում ենք հակառակ պատկեր՝ կա աշխատատեղ, սակայն չկա աշխատող: ՀՀ վարչապետը զորավարժությունների ժամանակ Սիսիան կատարած վերջին այցի ժամանակ էլ բարձրաձայնեց դրա մասին: Մարզում ներկայումս ընթանում են մեծածավալ շինարարական աշխատանքներ, եւ շինարարական ընկերությունները դժվարությամբ են կարողանում համալրել թափուր աշխատատեղերը: Սյունիքում ստեղծված աշխատատեղերի թիվը կամփոփենք 2019թ. ավարտից հետո:

Նշեմ, որ հեղափոխությունից հետո քչացել են արտագնա աշխատանքի մեկնողները: Քիչ չեն օրինակները, երբ մարդիկ վերադառնում են արտագնա աշխատանքից՝ այլեւս չմեկնելու որոշմամբ, վերադառնում են ընտանիքներով: Ամենօրյա ընդունելությունների ժամանակ հանդիպում եմ այդպիսի մարդկանց:

– **Անցած տարվա սյունիքյան ակնառու հաջողություններից մեկը, դարձյալ մեր դիտարկմամբ, մարզի ավտոմայրուղիներում կատարված եւ կատարվող հսկայածավալ աշխատանքն է:**

Կարելի է նույնիսկ աննախադեպ համարել այդ ամենը:

Միեւնույն ժամանակ՝ պիտի խոստովանել, որ հատկապես մայրուղիներից գյուղական բնակավայրեր ձգվող ճանապարհների վիճակը շատ դեպքերում մնում է ծայրահեղ վատ:

– Մարզում աննախադեպ ծավալների եւ որակի ճանապարհաշինական աշխատանքներ են կատարվում: Բնականաբար, ծրագրերն ընտրվում են ըստ առաջնահերթությունների, եւ առաջին պլանում միջպետական մայրուղու հատվածներն էին ու խոշոր համայնքներն իրար կապողները: Այնպես չէ, որ գյուղական ճանապարհներին ընդհանրապես աշխատանք չի արվել, որոշ տեղերում, որտեղ որ սպասարկումն իրականացնում են մարզի ՃՇՇՁ-ները, բարեկարգվել են մասնակի, կամ խոշորացված համայնքներն իրենք են իրենց ուժերով բարելավել: Ամեն դեպքում, ծավալները շատ մեծ են, ու քանի որ երկար տարիներ ոչինչ չի արվել, չարվածն աչքի է զարնում, բայց հերթը, իհարկե, գյուղերին էլ կհասնի: Օրինակ, հստակ է, որ 2020 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսվում է հիմնանորոգել Տաթեւ-Աղվանի ճանապարհի շուրջ 12,5 կմ հատվածը:

Երեկ եւ այսօր ՀՀ տարածքային կառավարման ու ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանի, իր տեղակալների ու այլ պատասխանատուների հետ շրջել, ստուգել ենք եւ՛ ճանապարհաշինության, եւ՛ էներգետիկ ենթակառուցվածքների ոլորտում կատարված, եւ ընթացող աշխատանքների ողջ ծավալն ու որակը՝ Գորայքից մինչեւ Ագարակ (Սիսիանի զանգերից մինչեւ հայ-իրանական պետական սահման):

– **Ունե՞ք Հյուսիս-հարավ ավտոմայրուղու սյունիքյան հատվածին առնչվող նոր տեղեկություններ:**

– Կարող եմ ասել, որ այս պահին մեկնարկել են «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» Տրանշ-4-ի Քաջարան-Ագարակ հատվածի նախագծման աշխատանքները: Քաջարան-Ագարակ հատվածի վերակառուցումը ֆինանսավորվում է ՀՀ կառավարության եւ Եվրասիական կայունացման ու զարգացման հիմնադրամի միջոցներով: Ըստ պայմանագրի՝ նախագծման աշխատանքները պետք է ավարտին հասցվեն 15 ամսվա ընթացքում, իսկ ճանապարհահատվածի վերակառուցումը կիրականացվի 2021-23 թվականներին:

– **2019 թ. մայիսի 27-ին տեղի ունեցավ հայտնի բիզնես-ֆորումը՝ «Իմ քայլը հանուն Սյունիքի» կարգախոսով:**

Ի՞նչ տվեց ֆորումը մարզին, ի՞նչ ընթացքի մեջ են ստորագրված համաձայնագրերը կամ ներկայացված ծրագրերը:

– «Իմ քայլը հանուն Սյունիքի մարզի» ներդրումային համաժողովը նպատակ ուներ ներդրողներին ներկայացնել մարզում առկա բիզնես-ծրագրերը: Կարծում եմ՝ ներդրումների ներգրավումը եւ ծրագրերի իրականացումը շարունակական եւ անընդհատ գործընթաց են:

Որպես ֆորումի հաջողություն՝ կարող եմ նշել Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության հետ կնքված հուշագրի շրջանակներում Կապանի երկու դպրոցում «Արմաթ» լաբորատորիաների ստեղծումը: Կրկնեմ, գործընթացը շարունակական է:

– **Վերջին տարիներին մենք շատ ենք խոսում սյունիքյան տնտեսության դիվերսիֆիկացիայի մասին: Եվ հիմա կարող ենք փաստել, որ Սյունիքում զբոսաշրջությունն արդեն իր լուրջ տեղն ունի՝ համապատասխան ենթակառուցվածքներով:**

Ներկայացրեք, խնդրեմ, զբոսաշրջության վիճակը Սյունիքի մարզում:

– Մարզը լուրջ ներուժ ունի զբոսաշրջության զարգացման առումով, եւ մեր խնդիրն է համապատասխան ենթակառուցվածքներ ստեղծել առկա առավելություններն օգտագործելու համար:

Տարեցտարի աճում է մարզ այցելող զբոսաշրջիկների թիվը: Գաղտնիք չէ, որ Տաթեւի վանքը եւ «Տաթեւեր» ճոպանուղին ՀՀ ամենատարածված զբոսաշրջային ուղղություններից են:

Այս տարի ավարտվել է Տաթեւից Խուստուփ մոտ 250 կմ երկարությամբ քայլարշավային երթուղու կառուցումը, որը միացնում է շուրջ 30 գյուղական բնակավայր մարզում՝ նպաստելով հարակից տարածքների գրավչությանը, պատմական վայրերի բացահայտմանն ու էկոտուրիզմի զարգացմանը: Խոսքը Եվրամիության կողմից համաֆինանսավորվող «Արկածային տուրիզմի զարգացում պատմական Սյունիքում» ծրագրի մասին է:

Հաջորդ տարի, ինչպես նշեցի, կվերակառուցվի Տաթեւ-Կապան ավտոճանապարհի Տաթեւ-Աղվանի հատվածը, ինչը եւս մեկ լուրջ խթան կդառնա մարզի տարածքում զբոսաշրջության համաչափ զարգացման համար:

Անելիքների ցանկը շատ երկար է, եւ դրան ապագայում կանդրադառնանք մայրաքաղաքում կազմակերպվելիք քննարկման շրջանակներում:

– **Սեպտեմբերի վերջին եւ հոկտեմբերի առաջին օրերին համաբանակային զորավարժություններ էին Հայաստանում եւ Արցախում, ինչի առիթով, ի դեպ, Սյունիք ժամանեց նաեւ հանրապետության վարչապետը:**

Ինչպե՞ս եք գնահատում այդ վարժանքները եւ մասնավորապես Սյունիքում տեղաբաշխված զորամիավորումների, նաեւ Սյունիքի զինկոմիսարիատի գործունեությունն այդ օրերին:

– Զորավարժություններին մասնակից ու համագործակցող բոլոր կողմերի աշխատանքը նորմալ եմ գնահատում, իսկ այդ ընթացքում սյունեցին հերթական անգամ ցույց տվեց իր կամքը, մարտական ոգին եւ սերն առ հայրենիք: Բոլոր գերատեսչություններն ու կազմակերպությունները, համայնքները կատարեցին իրենց առջեւ դրված խնդիրները: Իհարկե, կային թերություններ եւս, զորավարժությունները նաեւ դրանք ի հայտ բերելու համար են, ու շտկման ուղղությամբ պետք է աշխատանք տանենք:

– **Մեղրիի հետ կապված երկու հարց:**

Նախ՝ մարդիկ ոգեւորված են, որ շրջանն ի վերջո կունենա գազամատակարարում:

Ի՞նչ փուլում են նախապատրաստական աշխատանքները:

Եվ երկրորդ՝ օրեր առաջ վարչապետը հերթական անգամ տարակուսանք հայտնեց Մեղրու ազատ տնտեսական գոտու ստեղծման հեռանկարի առնչությամբ՝ ասելով, թե այնտեղ ազատ տարածք չի մնացել:

Ի վերջո, ի՞նչ է սպասվում Մեղրու ազատ տնտեսական գոտու ստեղծման ծրագրին:

– Նախատեսվում է կազմել Մեղրի համայնքի գազիֆիկացման համար անհրաժեշտ աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը, որը կֆինանսավորի Ագարակի ՊՄԿ-ն, որից հետո պարզ կլինի, թե որքան գումար է անհրաժեշտ՝ գործն ավարտին հասցնելու համար: Ուզում եմ շեշտել, որ խնդիրը կառավարության եւ մարզպետարանի ուշադրության կենտրոնում է, եւ վստահություն հայտնել, որ երկար տարիներ անլուծելի համարվող խնդիրն ի վերջո դրական ելք կունենա:

Մեղրու ազատ տնտեսական գոտու հողերի հարցով քրեական գործ կա հարուցված, որի ընթացքը պատշաճ չեմ համարում մեկնաբանել, կարծում եմ՝ պետք է սպասենք հանգուցալուծմանը:

Ուզում եմ շեշտել, որ ազատ տնտեսական գոտում ներդրումներ կատարելու հարցում մեծ շահագրգռվածություն կա թե՛ իրանական կողմի, թե ԵԱՏՄ գործընկերների շրջանում: Դրա վառ վկայությունը տարբեր երկրների դեսպանների պարբերական այցերն են Սյունիք ու այդ ծրագրի նկատմամբ հետաքրքրությունները:

– **Սյունիքի ամենամեծ հարստությունը հողային ռեսուրսն է:**

Ներկայացրեք, խնդրեմ, մարզի վարելահողերի օգտագործման պատկերը, որը հետխորհրդային տարիներին միշտ էլ խնդրահարույց է եղել մարզում:

Ընթացիկ տարում պետությունն ինչո՞վ օգնեց գյուղացուն:

– Մարզի 43.8 հազար հա վարելահողերից անմշակ է 60 տոկոսը: Սյունիքում մի շարք ծրագրեր են իրականացվում միտված գյուղատնտեսության զարգացմանը: Օրինակ՝ 2019թ. սուբվենցիայի ծրագրի շրջանակներում իրականացվում է Սիսիան համայնքի Անգեղակոթ, Բռնակոթ եւ Որոտնավան բնակավայրերում ոռոգման համակարգերի կառուցման ծրագիրը, արդեն ավարտին է մոտենում Սիսիան եւ Արեւիս, Թասիկ, Սալվարդ, Բռնակոթ բնակավայրերում գյուղատնտեսական մեքենասարքավորումների համալրման ծրագիրը:

Գյուղատնտեսության զարգացման համար պետական օժանդակության բազմաթիվ ծրագրեր են իրականացվում ՀՀ-ում:

– **2019-ը ծանր տարի էր հատկապես հրդեհների առումով:**

Փորձագետներից շատերի կարծիքով՝ դրանք հաճախ պայմանավորված էին մարդկային գործոնով (եւ ոչ միայն եղանակային):

Կարելի՞ է արձանագրել, որ այդ ամենից համապատասխան կառույցները դասեր են քաղում:

– Քանի որ հրդեհների մեծ մասը մեր բնակչության անփութության հետեւանք էին, իսկ այս տարվա ծավալները՝ աննախադեպ շատ, հաճախ էլ՝ անմատչելի վայրերում, կարծում եմ՝ պետական կառույցներին աշխատանքում թերանալու մեջ մեղադրել չի կարելի: Իհարկե, աշխատանքների առաջին պլանում ԱԻՆ փրկարար ծառայության մարզային կառույցն էր ու այն կատարում էր իր գործառույթները, բայց ուզում եմ առանձնացնել նաեւ այլ կազմակերպությունների նվիրված, սրտացավ եւ իրոք անձնվեր աշխատանքն ամռանը Սյունիքում անտառային հրդեհների մարման գոր-

էջ 8

> *Մարզի 43.8 հազար հա վարելահողերից անմշակ է 60 տոկոսը: Սյունիքում մի շարք ծրագրեր են իրականացվում միտված գյուղատնտեսության զարգացմանը:*

> *Կարող եմ ասել, որ այս պահին մեկնարկել են «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» Տրանշ-4-ի Քաջարան-Ագարակ հատվածի նախագծման աշխատանքները*

Դղդղնածակ կոչվող քարանձավը Հարժիսի կիրճում, որ համաշխարհային ճանաչում ունի

«Սյունյաց երկրի» ստեղծագործական խումբն այդ քարանձավ այցելեց 2019 թ. հոկտեմբերի 6-ին:

Երթուղին այսպիսին էր՝ Հարժիս-Ներքի շեն-Հարժիսի լիճ, որտեղից բարձրացանք կիրճի հարավային լեռնալանջը՝ մոտ 700-800 մ հեռավորության վրա գտնվող:

Հատկապես վերջին հատվածը դժվարանցանելի է, եւ մեծ ջանք պահանջվեց բարձրանալու համար:

Մեզ ուղեկցում էին Հարժիս գյուղի մի խումբ երիտասարդներ՝ Հրայր Ղեւոնդյանի գլխավորությամբ (Արմեն Ավանեսյան-Ալեքսանյան, Սամվել Բաբայան, Մուշեղ Օհանջանյան):

Վերջին երեքը ձիերով էին, թեեւ Հարժիսի լճից դեպի բարձունք ձգվող ճանապարհն անանցանելի էր ձիերի համար (ձիերը թողեցինք լճի մոտակայքում):

Ձիերեից օգտվեցինք հետդարձի ճանապարհին՝ լճից մինչեւ Ներքի շեն, ապա՝ Հարժիս (միայն 5-րդ դասարանցի Սոֆի Լազարյան թոռնիկս էր, որ գերադասեց ամբողջ ճանապարհն անցնել ոտքով):

...Դղդղնածակ խորհրդավոր քարանձավի մասին լսել էի դեռեւս մանկության տարիներին:

Դղդղնածակ այցելած համագյուղացիներս պատմում էին, որ այնտեղ՝ քարանձավի խոռոչներում տեսել են մատյաններ, գորգերի եւ կարպետների կույտեր, որոնք փլվում-մոխրանում էին, երբ ձեռք էին տալիս:

Հետագայում, երբ արդեն սովորում էի պատմության ֆակուլտետում, իմ համագյուղացի Թանգի Հայրապետյանն այդ մատյաններից մի մասունք նվիրեց ինձ, իսկ ես՝ հնագիտության ճանաչված դասախոս Վարշամ Ավետյանին (դա A4 չափսի թղթի մեկ քառորդի չափ կտոր էր):

Գյուղի տարեցներն էլ պատմում էին, թե քարանձավը Տաթեւի վանքի ամենամեծ եւ ապահով ստորգետնյա գաղտնարանն է եղել կամ պատսպարանը:

Բայց տարիների ընթացքում քարանձավի ներսում փլվածքներ են գոյացել, ու հիմա հատուկ եւ մասնագիտացված արշավախումբ է պետք, որպեսզի ստորգետնյա այդ տարածքում կողմնորոշվենք, գնանք մինչեւ վերջ, ճշտենք քարանձավի ներսի ճանապարհների ծյուղավորումները, անդունդները եւ խոռոչները:

Ասում են՝ Դղդղնածակը երկու մուտք ունի:

Մենք քարանձավ մտանք հյուսիս-արեւելյան մուտքից, որ գլխավոր մուտք է համարվում:

Երկրորդ մուտքը գտնելու համար անհրաժեշտ է, ներս մտնելուց հետո, ճամփա ընկնել աջ խոռոչով...

Մեզ ուղեկցող տղաներից Սամվել Բաբայանն ու Մուշեղ Օհանջանյանը գնացին այդ ուղղությամբ, բայց, ինչպես հետո պարզվեց, երկրորդ մուտքը չգտան: Գտան միայն մի փոքր անցք-լուսամուտ՝ հյուսիսահայաց ուղղությամբ, որտեղից լույսի ճառագայթներ էին թափանցում, իսկ ելք չկար:

Մի պահ կորցրինք մեր երկու ուղեկցին եւ ստիպված Արմեն Ավանեսյան-Ալեքսանյանին խնդրեցինք որոնել նրանց:

Պարզվեց, որ նրանք քարանձավի աջ խոռոչում հայտնվել են չղջիկների «թագավորությունում» (չղջիկները գիշերային կաթնասուն կենդանիների կարգից են, որոնց առջեւի վերջավորությունները վերածվել են մաշկային թեւերի):

Հետո դադարեցրինք առաջխաղացումը, քանի որ չէինք վերցրել համապատասխան պարագաներ՝ թթվածին, լուսավորության միջոցներ, պարաններ, չէինք ձեռնարկել անվտանգության միջոցառումներ...

...Դղդղնածակ կոչվող քարանձավի հանդեպ հետաքրքրություն է առաջացել նաեւ աշխարհի տարբեր երկրներում:

Մի քանի ամիս առաջ էր, որ Մեծ Բրիտանիայից գիտական արշավախումբ եկավ Դղդղնածակ:

Ուսումնասիրության առաջին արդյունքները հրապարակվել են անգլիական թերթերում. առաջիկայում այդ հրապարակումներից մեկը կփորձենք թարգմանաբար ներկայացնել ընթերցողին:

Արշավախումբը կարողացել էր խորանալ մինչեւ 578 մետր՝ Տաթեւի ուղղությամբ:

Սակայն, ըստ մասնագետների, քարանձավն անկանխատեսելի է եւ, ամենայն հավանականությամբ, այն շարունակություն ունի:

Բրիտանացի քարանձավագետների պնդմամբ՝ Դղդղնածակը (արդեն հայտնի չափսերով) Հայաստանի տարածքում գտնվող երրորդ քարանձավն է՝ մեծությամբ:

Առաջինն Արջերի քարանձավն է, երկրորդը Մագելանի քարանձավն է:

Սակայն, ինչպես նշեցինք, ուսումնասիրությունների դեպքում կարող ենք ունենալ միանգամայն այլ պատկեր՝ քարանձավի չափսերի առումով:

Տիգրան Արմենյանի պնդմամբ, ով համագործակցել է բրիտանական արշավախմբի հետ, Դղդղնածակում գտել են կենդանական ոսկորներ, խեցեղեն, որոնք հանձնվել են հանրապետության հնագիտական կենտրոններին, որտեղ էլ դեռեւս այդ գտածոները գիտական մշակման ու գնահատականի չեն արժանացել:

Ի՞նչ ծագում ունի Դղդղնածակը:

Այդ առումով երկու կարծիք կա՝ ձեռակերտ եւ անձեռակերտ:

Մեր կարծիքով (առերեւույթ ստացած տպավորությունից)՝ դա ձեռակերտ քարանձավ է. նման ենթադրության տեղիք են տալիս՝ նախ՝ մուտքից դեպի ձախ ձգվող պատի հետքերը, ապա քարանձավի ներսի ճյուղավորումները, որ իսկական լաբիրինթոս են հիշեցնում, այնուհետեւ քարանձավի ներսի պատերի վրա (20-30 մ բարձրությամբ) փորված փոքր քարանձավները:

Հայաստանի քարանձավագիտական կենտրոնի նախագահ, ճարտարապետության դոկտոր Սամվել Շահինյանի կարծիքով՝ դա կարստային քարանձավ է՝ առաջացած երկրաբանական, քիմիական երեւույթների ազդեցությամբ:

Կարստային ասելով՝ Սամվել Շահինյանը նկատի ունի նախկին Հարավսլավիայի հյուսիս-արեւմուտքում (Իստրիա թերակղզուց հյուսիս) գտնվող, աշխարհի ամենանշանավոր քարանձավներից մեկի՝ Պոստոյնսկա-Յամա քարայրի տեսակը: Կարստ կամ Կրաս սարավանդի անունից առաջացած երեւույթ-քարանձավները (կարստային) ջրի եւ քիմիական պրոցեսների արդյունք են, ինչպիսին կարող է լինել նաեւ Դղդղնածակը:

Բոլոր դեպքերում այդ հարցի գիտական պատասխանը դեռեւս տրված չէ:

Իսկ ինչպե՞ս է ստուգաբանվում քարանձավի անունը՝ Դղդղնածակ:

Սամվել Շահինայնի կարծիքով՝ *«Անվանումի արմատը, ամենայն հավանականությամբ, դաղդղան բառն է:*

Դաղդղանը կախարդազարդ է, հմայիլ, թալիսման:

Դաղդղաններն օգտագործվել են հին Հայաստանում:

Հին հայերը համարում էին, որ դաղդղաններն իրենց մեջ գերբնական ուժ ունեն եւ պաշտպանում են մարդկանց չար աչքից, դժբախտություններից եւ սատանայից»:

Թե ինչով էր պայմանավորված քարանձավի՝ գերբնական ուժ ունենալը, կարելի է միայն ենթադրություններ անել:

Դղդղնածակից վերադարձանք մեծ տպավորությամբ:

Նաեւ՝ ափսոսանքով. *կարելի է պատկերացնել, թե որքան զբոսաշրջիկներ կայցելեին առեղծվածային այդ քարանձավ, եթե նորմալ արահետ լիներ գոնե՝ Ներքի շենից մինչեւ լիճ եւ լճից մինչեւ քարանձավ, մանավանդ որ Դղդղնածակի ստորոտում է (Հարժիսի կիրճում) գտնվում Հարժիսի լիճը՝ Սյունյաց աշխարհի հրաշալիքներից մեկը, որ խոսակցության առանձին նյութ է:*

Տարօրինակ է մեր հնագիտական հանրության վերաբերմունքը. Մեծ Բրիտանիայից գալիս-հասնում են Հարժիս՝ հետազոտության, իսկ հայաստանցի հնագետները նույնիսկ դրա տեղը չգիտեն:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Գորայքի նորընտիր համայնքապետ Աշոտ Աղաջանյանը եւ նորընտիր ավագանին պետք է համագործակցեն. ուրիշ ճանապարհ չկա, եթե, իհարկե, նպատակը համայնքային խնդիրների լուծումն է

էջ 2

մարդկանց չի հաջողվում հողից, անասունից ավելին ստանալ, իսկ դրա համար օբյեկտիվ պատճառներ կան: Սա ինչու համայնքի զարգացման հնգամյա ծրագրում շեշտը դրել ենք դաշտամիջյան ճանապարհների բարեկարգմանը, թեեւ այդ ուղղությամբ հիմա որոշ աշխատանք իրականացվել է արդեն, պետք է կառուցենք մակաղատեղիներ, հովիվների, անասնապահների համար կացարաններ եւ այլն: Այս եւ այլ «չկա-ների» լուծման տարբերակները նշվել են ծրագրում: Մեր տեսլականն է՝ առաջիկա 5 տարվա ընթացքում ունենալ շրջակա միջավայրի հետ ներդաշնակ ապրող, երջանիկ եւ բարեկեցիկ բնակչություն, բարձրորակ ու մրցունակ ապրանք եւ ծառայություններ առաջարկող փոքր ու միջին տնտեսվարողներ, նորարարական տնտեսությամբ հանրապետությունում առաջատար համայնք:

– **Ինչ եք կարծում, համայնքի զարգացման հնգամյա ծրագրում նախատեսվածը Ձեզ կհաջողվի՞ իրականություն դարձնել եւ որո՞նք են Ձեր հենման կետերը:**

– Աշխատանք, եռանդ. եթե առկա է այս ամենը, ուրեմն արդյունք կլինի:

– **Այսինքն՝ համայնքապետն արդեն գիտի՞ գումարելիների տեղերը:**

– Այս պահին Գորայքի կենտրոնական փողոցի ասֆալտապատման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքներ ենք իրականացնում. շարվում են մայթերի եզրաքարերը, ջրահեռացման աշխատանքներն են իրականացվում, մայթերը կունենան 3 սմ հաստության ասֆալտբետոնե ծածկ, փողոցը՝ 4 սմ, Գորայքից 7 մարդ է մասնակցում փողոցի ասֆալտապատմանը, իսկ գործը սկսել ենք հոկտեմբերի սկզբներին, ամեն ինչ բարեհաջող է ընթանում: Ընդհանուր առմամբ, Գորայք համայնքում իրականացրել ենք 1070 քառ. մետր ասֆալտապատում:

Խոշորացված համայնքի մեջ 4 բնակավայր է մտնում՝ Ծղուկը, Սպանդարյանը, Սառնակունքը եւ Գորայքը:

Սառնակունքում փողոցների գիշերային լուսավորության ցանցն ենք նորոգել, ինչպես նաեւ նորոգել ենք վարչական շենքը, լուսավորության ամբողջ ցանցը դպրոցին կից նախակրթարանի շենքն էլ մասնակիորեն ենք նորոգել... Այս աշխատանքներն իրականացրել ենք պետբյուջեի հաշվին՝ համաներդրմամբ:

Գորայք համայնքը ձեւավորվել է 2016 թ.: Ունի 1842 բնակիչ: Համայնքում 2019 թ. չորս հարսանիք է եղել, պակասել է ծնունդների թիվը, հետեւաբար՝ աշակերտների թիվը: Ծղուկ բնակավայրը 2019-20 ուսումնական տարում 1-ին եւ 12-րդ դասարաններ չունի՝ աշակերտ չլինելու պատճառով:

– Երիտասարդությունը չի մնում համայնքում, գնում է Երեւան, պատճառը գործազրկությունն է: Եթե «Լիդիան Արմենիան» աշխատի, համոզված եմ, նրանց մի մասը կվերադառնա համայնք:

Ի դեպ, Գորայքն Ամուլսարի համար համարվում է ազդակիր համայնք: «Լիդիան Արմենիան» ամեն տարի 120 միլիոն դրամ հողի հարկ է վճարում համայնքին: «Լիդիան Արմենիան» 2010-2012 թթ. վճարել է համայնքի ուսանողների ուսման վարձը, նորոգել Գորայքի գրադարանը, կենցաղի տունը եւ այլն:

– Համայնքից 30-ից ավելի մարդ էր աշխատում «Լիդիան Արմենիայում», – ասում է համայնքապետը եւ ավելացնում, – *նրանք ապառիկով գնումներ էին կատարել, վարկ էին վերցրել եւ նորմալ կատարում էին իրենց պարտավորությունները: «Լիդիան Արմենիայի» չաշխատելու պատճառով այդ մարդիկ կրախի առաջ են կանգնել, նրանք չեն աշխատում, իսկ վարկերի, ապառիկների տոկոսները նրանց օգտին չեն խոսում:*

– **Գորայքում մարդիկ ի՞նչ կարծիք ունեն Ամուլսարի շահագործման մասին, կո՞ղմ են դրա շահագործմանը, թե՞ դեմ:**

– Եթե հանքի շահագործումը վնաս չի տա մարդկանց առողջությանը, շրջակա միջավայրին, թող «Լիդիան Արմենիան» աշխատի...

Ալվարդ Մեսրոպյան

Մեկ տարի առաջ գեներալ-լեյտենանտ Հունան Պողոսյանը ստանձնեց Սյունիքի մարզպետի պաշտոնը

Հունան Պողոսյանը պատասխանում է «Սյունյաց երկրի» հարցերին

էջ 6

ծում՝ «Զանգեզուր» կենտրոնական համալիրի անձնակազմն է, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի մարզային մասնաճյուղերի աշխատակիցները, մարզում տեղակայված բանակային կորպուսների կազմը՝ հրամանատարներն ու զինվորները, համայնքապետարանները, տեխնիկա տրամադրող ճանշինները, հանքարդյունաբերական կոմբինատները, այլ տնտեսվարողներ: Չլինեին նշածս կառույցների համատեղ աշխատանքն ու մասնակցությունը, հնարավոր չէր լինի արդյունավետ պայքարն ու հրդեհների մարումը:

– **Հանրակրթության ոլորտը քաղաքականացված վիճակից, կամայականություններից դուրս բերելու խնդիր ունենք, ինչպես եւ կրթության ու դաստիարակության գործն աստիճանաբար առաջին պլան մղելու խնդիր:**

Այդ բոլորով հանդերձ՝ որո՞նք են հանրակրթության ոլորտում Ձեզ անհանգստացնող խնդիրները:

– Դեռ չեմ կարող ասել, որ այդ ոլորտում իդեալական կամ գոհացնող վիճակ է, ընթացքի մեջ ենք, ու անչափ կարեւոր այդ բնագավառում, իհարկե, ամբողջովին չենք լուծել բոլոր հարցերն ու չենք հասել այն մթնոլորտին, որին ձգտում են, շատ անելիքներ կան: Հին մտածելակերպի ու վարքի արատավոր դրսեւորումները պետք է արմատախիլ արվեն:

Մի քանի օր առաջ մարզպետարանում՝ մասնագիտական տոնի առիթով, մեծարեցինք արժանավոր ուսուցիչներին, անկեղծ զրույց ծավալվեց, խոսեցինք նաեւ խնդիրներից ու մտահոգող երեւույթներից:

Հաշվի առնելով մանկավարժների աշխատանքի բոլոր բարդությունները՝ կարծում եմ՝ նրանցից յուրաքանչյուրի կարեւոր առաքելությունն է սիրել մասնագիտությունը եւ նվիրյալ լինել՝ պատշաճ գիտելիքներ տալով աշակերտներին:

– **Ինչպե՞ս եք գնահատում մարզի բուժական հաստատությունների վիճակը, նկատի ունենք հատկապես մասնագետներով ապահովվածությունը:**

Ունե՞նք մանկան մահացության դեպքեր:

Ունե՞նք նորություններ բուժական սարքավորումների, լաբորատորիաների արդիականացման ուղղությամբ:

– Մեր բժշկական կենտրոնները, բացի Սիսիանից, բոլորն էլ ժամանակակից վերանորոգում եւ հարմարավետ շենքային պայմաններ ունեն: Իսկ բուժհաստատությունների արդիականացումն անընդհատ գործընթաց է, եւ պարբերաբար տեխնիկական վերազինում է կատարվում, այս պահին խիստ անհրաժեշտ սարքավորումներ ձեռք բերելու ուղղությամբ աշխատանք ենք տանում:

Ինչ խոսք, մասնագետներով ապահովվածության խնդիրը մնում է արդիական, հատկապես՝ նեղ մասնագետների, եւ այդ բացը փորձում ենք լրացնել պարբերաբար Երեւանից բժիշկներ հրավիրելով:

Իսկ Սիսիանի ԲԿ-ի հիմնանորոգման խնդրին կառավարությունում եւս տեղյակ են, ու այն մեզ համար առաջնային հարցերի ցանկում է, լուծումներ ենք փնտրում:

Ներկայացնեմ մանկական մահացության վերջին տարիների վիճակագրությունը՝ 2016թ.՝ 8.2 պրոմիլ, 2017թ.՝ 6.7 պրոմիլ, 2018թ.՝ 5.5 պրոմիլ՝ սա՝ մասնագիտական լեզվով, իսկ առավել պարզ նշանակում է, որ մանկական մահացության թիվը վերջին տարիներին նվազել է:

– **Մարզպետարան-համայնքապետարաններ հարաբերությունը:**

Արդյո՞ք մարզպետարանն ունի համապատասխան լծակներ՝ համայնքապետարանների եւ համայնքապետերի գործունեությունը վերահսկելու համար:

– Գիտե՞ք, կարեւորն այն է, որ քաղաքացին՝ ընտրողը ճիշտ գնահատի համայնքի ղեկավարների աշխատանքը, կարողանա սթափ մտածել, տարբերել իրական աշխատանքը ցուցադրականից ու կատարի ճիշտ ընտրություն: Եվ այսօր առավել քան համոզված ասում եմ, որ ոչ ոք չի կարող միջամտել ընտրություններին: Իսկ նման ճանապարհով ընտրված համայնքի ղեկավարներն աներկբա «դատապարտված» են բարեխղճորեն աշխատելու եւ հաշվետու լինելու ընտրողների առջեւ: Այս պարագայում արդեն նոր բնույթ են ստանում նաեւ մարզպետարան-համայնքապետարան հարաբերություններն ու հետապնդում են մեկ ընդհանուր նպատակ՝ անել ամեն ինչ, որ դրական առումով ամրապնդվի, բարելավվի մեր ընտանիքների, համայնքների, մարզի, հայրենիքի վիճակը, շարժվենք միայն ու միայն առաջ՝ ունենալով բոլորիս համար շատ սիրելի Սյունյաց աշխարհի եւ Հայաստանի Հանրապետություն հայրենիքի զարգացման տեսլականը:

– **Պարոն Պողոսյան, դե ինչ, Ձեզ հաջողություն ենք ցանկանում՝ պատասխանատու առաքելության ճանապարհին:**

– Շնորհակալ եմ «Սյունյաց երկրի» հարթակում Սյունիքի մարզպետի մեկ տարվա գործունեությունն ամփոփելու համար:

Հարցազրույցը՝
Վահրամ Օրբելյանի

Ð²Ûî²ð²ðàôÂÛàôÜ

«Կապանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է 2019-2020 ուսումնական տարվա հեռակա ուսուցման ընդունելություն՝ «Դեղագործություն» մասնագիտությամբ

Ուսման տեւողությունը 3 տարի է, ընդունելության տեղերի թիվը՝ 10: Ուսումնառությունն իրականացվում է միայն վճարովի հիմունքներով: Ուսման վճարը մեկ տարվա համար կազմում է 180.000 հազար դրամ:
Քոլեջ կարող են դիմել միջնակարգ կրթություն, միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն ունեցող անձինք:
Քոլեջում ընդունելությունն իրականցվում է «Կենսաբանություն» առարկայի ընդունելության բանավոր քննության արդյունքների հիման վրա:
Փաստաթղթերն ընդունվում են ս/թ-ի հոկտեմբերի 17-ից մինչեւ նոյեմբերի 19-ը ներառյալ, աշխատանքային օրերին, ժամը 9:00-ից 16:00: Քննությունը կանցկացվի նոյեմբերի 22-ին՝ Կապանի պետական բժշկական քոլեջում:

Դիմորդը ընդունող հանձնաժողովին անձամբ ներկայացնում է հետեւյալ փաստաթղթերը.
- դիմում
- կրթության մասին փաստաթուղթ
- 4 լուսանկար (3x4 չափսի)
- անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ զինվորական գրքույկ, կամ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության բաժինների կողմից տրվող անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ, կամ կացության վկայական, կամ փախստականի վկայական)
- կցագրման վկայական (զինկոմիսարիատից)
- արտոնության իրավունքը հաստատող փաստաթուղթ (եթե առկա է)
- տեղեկանք աշխատանքի վայրից (առկայության դեպքում)
- ընդունելության կազմակերպման ու անցկացման համար դիմորդը նախապես վճարում է 1000 դրամ:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել քոլեջի ընդունող հանձնաժողով:
ՀԱՍՑԵՆ՝ ք. Կապան, Շահումյան 37 ա:
ՀԵՌԱԽՈՍՆԵՐ՝ 5-25-70, 094- 45 - 99 -36

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

www.syuniacyerkir.am
www.facebook.com/SyuniacYerkirNewspaper/

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47**
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:

Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 21.10.2019թ.:

QR ԿՈԴ